ՆԱԽԵՐԳԱՆՔ

(Հայոց Համայնապատկերը)

ԵՐԿԻՐ ՆԱՅԻՐԻ

1. Հայաստանի ամեն մի լեռ
Մի քարացած հայ է անմեռ։
Ամեն մի լեռ մի ճգնաւոր,
Մի իշխան է, մի թագաւոր։
Առնոս լեռը հովիւ է քաջ՝
Բլուրների հօտն իր առաջ։
Անդոկ լեռը՝ հայ մարգարէ՝
Միրտը կրակ, դէմքը՝ քարէ։
Աչքն աղօթող ծովն է Վանա՝
Նարեկացին՝ սարն է Սասնա։
Վարագա լեռընն՝ արծուի պէս
Քարացել է՝ Հայրիկն է, տե՛ս։
Աշնակ սարն էլ, աշնակցինե՛ր,
Ձեզ Մուշ կանչող Իշխանն է ձեր։
Վիհ-Շարան է Արագածը,
Որ տենչում է Կարսա հացը։
Արարատը՝ Հայկն է վիմուած՝
Երեւանտող յոյսի դիմաց.
Վար կը նայէ՝ մէկ Երեւան,
Հազար ու մէկ՝ դէպ Մուշ ու Վան։
Ազնանց փոքրը Միերն էլ Սիս՝
Ժայռի մէջ է, վա՜յ աչքերիս։
Տաւրոս լեռը՝ զիմ Կիլիկիան՝
Ինքն է հայոց վերջին արքան։
Ազգ իմ, Գրգուռ, Նեմրութն էլ քո,
Ծովասարն էլ՝ ամպի ներքո՝
Վարշամակուած հայոց վշտով,
Յօնքը կիտել վեհ ու վրդով՝
Ատրուշանի կրակն ընկած՝
Շնչում, ինչպէս Թոնդրակն հանգած,
Խուլ ծխում են՝ ելք են փնտրում,
Մթնաքողը պահ մի պատռում,
Այրում, նայում Արարատին՝
Հուր են ուզում ժայթքել չորս դին
Անդ շղթայուած լեռներըս վեհ,
Իմ աշխարհը, որ երբեէ

digitised by A.R.A.R.@

Գահ չի դառնայ ժանտ ոսոխին։
Աստուած կ'ինչնի դեռ մեր հողին.
Միշտ չենք մնա
Ասպատակուած,
Մի՛ Պարծենա,
Անզգամուած . . .
Հայոց լեզուն՝ թուրն է հայոց,
Թուր կայծակին՝ ընդդէմ վայոց։

. . . . . .

Հայաստանի ամեն մի լեռ՝
Վաղն հրաբուխ է մի անմեռ . . .

2. Ո՛վ անմեղաց մեջ անթեղուած հայոց անբոյժ վերք ու վիշտ,
Ո՞վ չի երազել մոռանալ ձեզ միշտ,
Բայց ո՛չ, այս անգամ դուրս եմ կանչում ձեզ
Բոլոր խորշերից քուն ու մոռացման,
Թեկուզ ինձ խոցէք չար երազի պէս,
Բայց, ելէ՛ք՝ ձեզ եմ կանչում այս անգամ։
Ըսպին իր վերքը մտքից չի հանի,
Ձեզ չի մոռանա իմ ազգը, սակայն՝
Թեկուզ մի սիրտ էլ մոռացած լինի՝
Զարթէ՛ք, դառն յուշեր, պէտք էք այս անգամ . . .
Ո՛վ դուք՝ վաներ յաւերժավրէժ հայոց եղեռնի,
Ո՛վ դուք՝ որ պատժանքն այս անզոյգ մեղքի կոկրդից բռնի,
Հատուցման արծիւն իր ժեռ վանդակից ի լոյս սլանա,
Որպէս աշխարհում իր միակ թառին՝ Մասիս բարձրանա,
Ելնեն ժեռ բանտից իմ Միերն ու ձին,
Որ գէթ աղ բերեն իմ յոյսի հացին։

. . . . . .

Եւ թող այս գիրքը դասագիրք դառնայ
Մանուկ մարդկության սեղանի վրայ։

ՑՈՎՀԱՆՆԷՍ ՇԻՐԱԶ

ՀԱՑՈՑ ՏԱՆԹԷԱԿԱՆԸ
(Հայ Կոտորածների յաւերժասուգին)

digitised by A.R.A.R.@